Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
ՀՀՌ-ՄԱԾՁԲ-20/2
ՏՊ-2020/01
ռադիոհաղորդումների հեռարձակման

ք. Երևան 08.01.2020թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Գ. Խումարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա համատեղ հիշատակմամբ՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պատվիրատուն պատվիրում է ռադիոհաղորդումների շուրջօրյա հեռարձակում FM տիրույթում, իսկ Կատարողը պարտավորվում է հավելված 1-ում նշված կայաններից իր տեխնիկական միջոցների շահագործմամբ իրականացնել Պատվիրատուի ռադիոծրագրերի հեռարձակումը, այսուհետ՝ «Ծառայություն»:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պատվիրատուն պարտավոր է.

2.1.1. Ապահովել Ծառայության Պայմանագրով նախատեսված ծավալը:

2.1.2. Տեղեկացնել Կատարողին Ծառայության ծավալի փոփոխման մասին, ոչ ուշ, քան հեռարձակման օրվանից 15 (տասնհինգ) օր առաջ:

2.1.3. Ապահովել մատուցված և իր կողմից ընդունված Ծառայության վճարումը սույն պայմանագրի 4-րդ բաժնում սահմանված կարգով:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի.

2.2.1. Մշտական հսկողություն իրականացնել հեռարձակման որակի և տեխնիկական նորմերի պահպանման նկատմամբ:

2.2.2.Տեխնիկական միջոցների վերահսկիչ չափումներ իրականացնելու համար այցելել Կատարողի տեխնիկական ծառայություններ՝ պահպանելով այցելության սահմանված կարգը:

2.3. Կատարողը պարտավոր է.

2.3.1. Ապահովել Ծառայության որակյալ և անխափան մատուցումը:

2.3.2. Հաղորդումների 30 (երեսուն) րոպե և ավելի տևողությամբ յուրաքանչյուր դադարի դեպքում կապի գործող միջոցներով տեղեկացնել Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի հետ համաձայնեցնել տեխնիկական միջոցների կանխարգելիչ աշխատանքների և էլեկտրական պարամետրերի պլանային չափումների ժամանակացույցը:

2.4. Կատարողն իրավունք ունի.

2.4.1.Կանխարգելիչ աշխատանքների իրականացման նպատակով դադարեցնել Ծառայության մատուցումը:

2.4.2.Առանց նախազգուշացման մասնակի կամ ամբողջությամբ դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե Պատվիրատուն խախտում է պայմանագրի 2.1.3. կետը՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին:

3. Ծառայությունների հանձնման – ընդունման կարգը

3.1. Կատարողը յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված փաստացի մատուցված Ծառայության վերաբերյալ արձանագրության և դրա հիման վրա կազմված Ծառայության գնի հաշվարկի 2 (երկու) օրինակ:

3.2. Պատվիրատուն փաստաթղթերը ստանալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված արձանագրության և հաշվարկի մեկական օրինակը կամ դրանց չընդունման պատճառաբանված մերժումը:

3.3. Եթե 3.2 կետում նշված ժամկետում Կատարողը չի ստանում ստորագրված արձանագրությունը կամ պատճառաբանված մերժումը, ապա Ծառայությունը համարվում է ընդունված:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. Պայմանագրի 1-ին կետում նշված Ծառայության համար տարեկան պայմանագրային գին է սահմանվում 73 710.1 հազար (յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր տասը հազար հարյուր) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն (Հավելված 2):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2.Պատվիրատուն վճարումն իրականացնում է յուրաքանչյուր ամիս, Կատարողի ներկայացրած հաշիվ-ապրանքագրի հիման վրա, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 30-ը:

4.3.Վճարման ենթակա չէ տեխնիկական միջոցի խոտանով աշխատելու ժամանակահատվածի 50%-ը և տեխնիկական կանգառի ողջ ժամանակահատվածը:

4.4. Կողմերի միջև համաձայնեցված ազդանշանի վերահսկման սարքավորման տված տեղեկատվության հիման վրա հաղորդակի ելքային հզորությունը և ձայնի մուտքային մակարդակի 10% շեղումը համարվում է նորմա, դրանից ավելին համարվում է խոտանով աշխատող ժամանակահատված:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (*ֆորս-մաժոր*)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրի պարտավորությունների կատարումը; Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.Պայմանագրի գործողության ժամկետը

6.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.2.Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի ծրագրի բովանդակության համար:

7.3.Պատվիրատուի և Կատարողի միջև պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքում ծագած այն տարաձայնությունները, որոնք կանոնակարգված չեն սույն պայմանագրով, լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4. Պայմանագիրը և Կողմերի միջև ամբողջ տեղեկատվությունը համարվում է գաղտնի և Կողմերը պայմանավորվում են չբացահայտել, չտարածել, չտպագրել և չտրամադրել երրորդ կողմի՝ նախապես չստանալով մյուս կողմի գրավոր թույլտվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին երկշաբաթյա ժամկետում:

7.6. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) իրավահամազոր օրինակից՝ մեկական օրինակ Կողմերից յուրաքանչյուրի մոտ:

7.7. Պայմանագրի բաղկացուցիչ մաս են կազմում նրան կից հետևյալ փաստաթղթերը՝

- Տեխնիկական միջոցների ցանկը (Հավելված 1):
- Ծառայության գնի հաշվարկը (Հավելված 2):

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ք. Երևան,Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ>> ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 220553334321000	Հ/h 1570027609970100
ՀՎՀՀ 01541435	ՀՎՀՀ 01501898
Պատվիրատուի կողմից	Կատարողի կողմից
Գ. Խումարյան	Մ. Միլիտոնյան

Հավելված 1

Ց Ա Ն Կ

ՀՀ տարածքում FM ցանցով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերության ծրագրի սփռման տեխնիկական միջոցների, 2020թ.

1. Ռադիոհաղորդակներ

N	Օբյեկտի անվանումը	հաղորդակի տիպը	հաճախությունը, Մհց	հաղորդակի հզորությունը, Վտ
1	2	3	4	5
	Արագածոտնի մարզ			
1	Ապարան	RT-FMS-251	104.0	250
2	Գեղաձոր	RT-FMS-251	103.5	250
	Արարատի մարզ			
3	Վեդի	RT-FMS-251	102.5	250
4	Զովաշեն	RT-FMS-251	104.0	250
5	Արմաշ	TF 30	103.4	20
	Արմավիրի մարզ			
6	Բագարան	TF 30	102.8	20
	Գեղարքունիքի մարզ			
7	Սևանի լեռնանցք	RT-FMS-1001	102.3	1000
8	Գավառ	RT-FMS-251	105.3	250
9	Անտառամեջ	RT-FMS-251	101.4	250
10	Ճամբարակ	TF 30	106.6	20
	Լոռու մարզ			
11	Պուշկինի լեռնանցք	RT-FMS-1001	101.1	1000
12	Վանաձոր	RT-FMS-251	104.7	250
13	Սպիտակ	RT-FMS-251	89.8	250
14	Չկալով	RT-FMS-251	105.9	250
15	Սարալանջ	TF 30	101.5	20
16	Սանահին	TF 30	91.1	20
17	Ախթալա	TF 30	90.7	20
18	Նորաշեն	TF 30	106.7	20
19	Լորուտ	TF 30	103.0	20
20	Ջիլիզա	TF 30	87.5	20
21	Թեղուտ	TF 30	100.6	20
22	Ծաղկաշատ	TF 30	89.3	20
23	Փամբակ	TF 30	103.4	20
	Շիրակի մարզ			
24	Ամասիա	RT-FMS-251	103.0	250
25	Արեգ	RT-FMS-251	107.2	250
	Կոտայքի մարզ			
26	Հրազդան	RT-FMS-251	100.1	250
27	Հանքավան	TF 30	102.5	20
28	Արտավազ	TF 30	106.0	20
29	Մեղրաձոր	TF 30	102.9	20
	Տավուշի մարզ			
30	Նոյեմբերյան	RT-FMS-251	101.7	250
31	Բերդ	RT-FMS-251	103.0	250
32	Սևքար	RT-FMS-251	103.9	250
33	Իջևան	RT-FMS-251	105.5	250
34	Այրում (Քարկոպ)	TF 30	88.8	20
35	Դիլիջան	TF 30	105.2	20
36	Այգեձոր	TF 30	90.2	20
37	Մոսեսգեղ	TF 30	107.5	20
38	Չինչին	TF 30	104.8	20
39	Կոթի	TF 30	104.0	20
40	Իծաքար	TF 30	100.9	20
41	Հաղարծին	TF 30	103.3	20

1	2	3	4	5
	Սյունիքի մարզ			
42	Կապան -1	RT-FMS-501	102.2	500
43	Սիսիան	RT-FMS-501	101.7	500
44	Գորիս	RT-FMS-251	103.1	250
45	Եղվարդ	RT-FMS-251	102.6	250
46	Քաջարան	RT-FMS-251	103.3	250
47	Մեղրի	RT-FMS-251	100.9	50
48	Դարբաս	TF 30	100.5	20
49	Գորայք	TF 30	89.8	20
50	Արևիս	TF 30	101.3	20
51	Սոֆլու	TF 30	104.9	20
52	Խնածախ	TF 30	100.0	20
53	Բարձրավան	TF 30	106.5	20
54	Վարդանիձոր	TF 30	103.7	20
55	Ագարակ	TF 30	106.9	20
56	Նյուվադի (Նոնաձոր)	TF 30	100.8	20
57	Շվանիձոր	TF 30	102.5	20
58	Տանձավեր	TF 30	107.6	20
59	Ծավ	TF 30	100.3	20
60	Շիկահող	TF 30	103.6	20
61	Գեղի	TF 30	105.4	20
62	Չայքենդ	TF 30	103.9	20
63	Տաշտուն	TF 30	105.8	20
	Վայոց Ձորի մարզ			
64	Եղագնաձոր	RT-FMS-251	101.4	250
65	Ջերմուկ	RT-FMS-251	100.3	50
66	Վայք	TF 30	101.9	20
67	Թերփ	TF 30	89.8	20
68	Մարտիրոս	TF 30	105.3	20
69	Սերս	TF 30	105.6	20
70	Նոր Ազնաբերդ	TF 30	104.5	20
71	Բարձրունի	TF 30	103.3	20
72	Արենի	TF 30	104.9	20
73	Հորս	TF 30	105.1	20
74	Աղնջաձոր	TF 30	106.4	20
75	Քարագլուխ	TF 30	105.9	20
76	Եղեգիս	TF 30	102.0	20
77	Հորբատեղ	TF 30	104.0	20
78	Հերմոն	TF 30	102.5	20
79	Վարդահովիտ	TF 30	107.0	20

2. Արբանյակային ընդունիչ կայան՝ 79 հատ

Պատվիրատու

ք. Երևան,Ալեք Մանուկյան 5
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ>> ՓԲԸ
հ/հ 220553334321000
ՀՎՀՀ 01541435

Պատվիրատուի կողմից

_____ *Գ. Խումարյան*

Կատարող

ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

Կատարողի կողմից

_____ *Մ. Միլիտոնյան*

Հավելված 2

ՀԱՇՎԱՐԿ

ՀՀ տարածքում FM ցանցով "Հայաստանի հանրային ռադիոընկերություն" ՓԲ ընկերության ծրագրի շուրջօրյա հեռարձակման ծառայության տարեկան գնի, 2020թ.

Տեխնիկական միջոցների անվանումը	հզորութ. (Վտ)	քանակը (հատ)	տեխնիկական միջոցի 1 ժամ աշխատանքի արժեքը (դրամ)	տեխ. միջոցների աշխատանքի ծավալը (ժամ)	ծառայության գինը (հազ.դրամ)	ԱԱՀ (հազ.դրամ)	ծառայության գինը ԱԱՀ-ով (հազ.դրամ)
Ռադիոհաղորդակ	1000	2	440	17520	7708,8	1541,7	9250,5
Ռադիոհաղորդակ	500	2	300	17520	5256,0	1051,2	6307,2
Ռադիոհաղորդակ	250	20	160	175200	28032,0	5606,4	33638,4
Ռադիոհաղորդակ	50	2	120	17520	2102,4	420,5	2522,9
Ռադիոհաղորդակ	20	53	35	464280	16249,8	3250,0	19499,8
Արբանյակային ընդունիչ կայան		79	3	692040	2076,1	415,2	2491,3
Ընդամենը՝					**61425,1**	**12285,0**	**73710,1**

Պատվիրատու

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ>> ՓԲԸ
հ/հ 220553334321000
ՀՎՀՀ 01541435

Պատվիրատուի կողմից

Գ. Խումարյան

Կատարող

ք. Երևան, Հովսեփյան 95
"Ամերիաբանկ" ՓԲԸ
ՀՀ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

Կատարողի կողմից

Մ. Միլիտոնյան